



ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒ ԵԿԵՂԵՑԻ  
Հովիւ՝ Վեր. Տիգրան Ծանկեան

Տարի 11, Թիւ 113 Փետրուար 2003

ՄԵՐ ՏԷՐԸ

«Ով Տէր, մեր Տէրը, ի՞նչ փառատր է քու անունը բոլոր երկրի վրայ.»  
Սաղմ. 8

Վերոյիշեալ համարը սաղմոսին առաջին եւ վերջին բառերն են, կարելի է նկատել գլխատր միտքը ամբողջ սաղմոսին:

Տիրոջը անունը կը ներկայացնէ իր նկարագրին բոլոր փառքն ու հարստութիւնները: Անոր փառքը «երկինքներէն վեր է», թէեւ երկինքը Աստուծոյ փառքը կը պատմէ:

Այս սքանչելի փառքը, անասման շնորհքի փառքը կը յայտնէ ինքզինք տկար «անօթներու» միջոցով, մանուկներ ու կաթընկէտ տղաներ գործածելով:

«Աստուած» բառը ամենակարեւոր եւ ամենադժուար բառերէն մէկն է: Աշխարհի լեզուներուն մէջ տարբեր անուն, նշանակութիւն եւ կարեւորութիւն ունեցող անուն մըն է:

Այլան 50 լեզուներու մէջ, Տիօ 40 լեզուներու մէջ Իշուար 40 լեզուներու մէջ, Կաստ 40, Տիվա 20, Խուտա 25, Մուլունկու 30 եւ Նայամպէ 30 լեզուներու մէջ: Կարեւորը, թէ այս անուններուն ետեւ ո՞վ կայ, ի՞նչ կայ:

Մեր Աստուածը հաճած է ընտրել տկարներ ու յիմարներ, որպէսզի ամօթով ընէ զօրատրներն ու իմաստունները: Բայց իր անունին փառքը, որ կ'երեւի լուսինին ու աստղերուն մէջ, որոնք իր մատներուն գործերն են, իսկ գլոխ գործոցը մարդն է. թէեւ հիվլէ մըն է նիփօական ստեղծագործութեան հետ բաղդատած:

Մարդը ի՞նչ է որ զանկա կը յիշէ:

Իր անունին փառքը կը յայտնուի մարդուն հետ ունեցած յարաբերութեան մէջ:

**1. Մարդուն Գիրքը** — «քիչ մը վար ըրիր զանկա հրեշտակներէն»: Իր պատկերովը, սակայն քիչ մը վար: Որքան մօտ եկած է Աստուած մարդուն, երբ իր նմանութիւնը ուզած է դրոշմել անոր վրայ: Ասոր հակառակ, ասրապիելի վիճակ մը ստեղծած է մեղքը, սուրբ տաճար ըլլալու կանչուած մարդը եղած է աստանային գործատեղին:

**2. Աստուծոյ հետաքրքրութիւնը** — «Մարդը ի՞նչ է որ զանհկա կը յիշես»: Երբ Աստուած կը յիշէ, այդ ցոյց կու տայ իր նկարագրի վեհութիւնը: Ան կը յիշէ մարդը բոլոր նիւթական դասատրումներուն մէջ, ստեղծագործական եւ նախախնամական:

Այս շնորհալի յիշողութիւնը եղաւ երկրի հիմերէն առաջ, երբ իր նպատակին մէջ Գառնուկը մորթուեցաւ: Ի՞նչ է մարդը որ Աստուծոյ մտքին մէջ ամենաբարձր հետաքրքրութիւնը ունի յափտենական անջնջելի ծրագիրով:

**3. Աստուած պատուած է մարդուն** — «փառքով ու պատուով պատկեցիր զայն» ու «ձեռքերուդ գործերուն վրայ իշխան դրիր զայն»: Ամէն բան մարդուն իշխանութեան տակ էր, մինչեւ որ մեղքը մտաւ, որուն որպէս հետեանք մարդուն զլուխէն պատկը ինկաւ, ու պէտք էր պատկը ուրիշին տրուէր: Յիսուս ալ ժամանակ մը, քիչ մը վար եղաւ հրեշտակներէն, տատապեցաւ եւ ահռելի մահ մը ունեցաւ, բայց պատկուեցաւ փառքով ու պատիով:

Ի՞նչ անզուգական է անոր անունը, որ տեսէ է այսպիսի փառք մը դնել կ'ուզէ մարդուն գլխուն վրայ:

**4. Աստուած մարդուն համար մեռած է** — «Մարդը ի՞նչ է, որ անոր այցելութիւն կ'ընես»:

Աստուած մարդուն այցելութիւն ըրաւ իր սիրելի որդիովը: Մարդ խաղաղութեամբ Աստուծոյ չէր կրնար այցելել մեղքի եւ ամօթի պատճառով: Բայց Աստուած իր անունի վեհութեամբ ու մեծ զին վճատելով այցելեց մարդուն, որ այնքան պէտք ունէր այցելութեան: Մարդը անյուս, տատապանքի ու նեղութեան մէջ էր, Աստուած բերաւ ու առաջարկ կատարեալ բախտանք անոր բոլոր մեղքերուն ու տատապանքներուն:

Յոր երանելին ըսաւ — «Տէր, մարդը ով է, որ դուն զայն մեծ բան մը կը համարես, ու անոր հոգ տանիս»: 7:17

Ի՞նչ փառատր Աստուած մը ունինք, որ գթարատ ուշադրութիւն ցոյց տուած է մարդուն ու այցելած է մարդէտրութեամբ, տուած է վերստին ծնունդ եւ փառատրած է յափտենական փառքով:

Ուստի կ'ըսենք — «Ով Տէր մեր Տէրը, ինչ փառատր է քու անունդ բոլոր երկրի վրայ»:

---

## ԵԿԵՂԵՑԻՆ ՈՒՆԻ ՀԵՏԵԻՆԵԱԼ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԸ

Կիրակի -	Առաւօտեան 11-ին Պաշտամունք Մանուկներու Կիրակնօրեայ
Երեքշաբթի -	Երեկոյեան 7-ին Սերտողութիւն
Հինգշաբթի -	7-ին Երիտասարդաց Սերտողութիւն 8:30-ին Երգչախումբի Փորձ
Ուրբաթ -	Առաւօտեան 10:30-ին Քոյրերու Ժողով 7:30-ին Պատանեաց
Շաբաթ -	Ամէն Ամսուայ Վերջին Շաբաթը Երեկոյեան 7-ին Երիտասարդ Ջոյգերու Ժողով

## **ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՏԷՐՈՋ ՓԱՌՔԻՆ ՀԱՄԱՐ**

- Տեղը կամի, այս տարուան անդամական ժողովը կ'ունենանք Փետրուարի 23-ին, պաշտամունքէն անմիջապէս ետք: Բոլոր հաստացեալներէն կը խնդրուի վերջին Կիրակին քիչ մը աւելի մնալ Տիրոջը տան մէջ, ցոյց տալով մեր նախանձախնդրութիւնը Աստուծոյ գործին:
- Յունուար 19-ին մեր եղեցներէն երկնագնաց Գէտրք եղբայր Թօփնեանի տարեկիցն էր. ունեցանք յիշատակի պաշտամունք մը: Բառական թիով Թօփնեաններ հաւաքուած էին: Իւղաբեր քրոջ փափաքով 13րդ երգը երգուեցաւ, նսեա Նուարդ քորը Լուլենեան կարդաց Լուսինէ Թօփնեանի արձակ եւ չափածոյ գրութիւնները ու հովիւր պատգամեց յիշելու կարեւորութեան մասին:
- Կրկին կը յիշեցնենք «Բարի Լուր»ի գրութիւններ, ինչպէս նաեւ Անգլերէնով «Կուտ Նիուզ»ի գրութիւններ պատրաստէք ու յանձնէք հովիւին:
- Աստուծոյ փառք կու տանք իր օրհնեալ շնորհքին համար, որ հասա փոքրիկն Փոլիմին (Գնաճեան) եւ այլեւս ան վերստին ծննդեան փորձարոտութեամբ պատանուի մըն է: Ընդհատուելով կ'աղօթենք որ Աստուած հաստատէ ու անեցնէ զինք հոգեւոր կեանքի մէջ:
- Տեղեկանալով երիտասարդաց նուագումբին մասին, Աստուծոյ փառք կու տանք, աղօթելով որ Տեղը ամէն բանի մէջ ամէն բան ըլլայ անոնց կեանքին մէջ, եւ խոնարհութեամբ իրենց աստուածատուր տաղանդները յափտենականութեան համար գործածեն:
- Կարգադրութիւններ կ'ըլլան Գէտրք եղբայր Պարոնեանի ձեռնադրութեան համար: Թէեւ թուական մը որոշ չէ, սակայն կը խնդրենք որ եկեղեցին աղօթէ այս խիստ կարեւոր միջին համար: Անկիա Տիրոջ առաջնորդութեամբ կրկին այցելեց Տէնլիր, Գոլորասո, եւ աւելի մեծ թիով հայրորդներու հետ պաշտամունք – սերտողութիւն ունեցաւ:
- Մեր քոյրերէն Վարսենիկ Կարապետեանի քեփին Վրաստանի մէջ մահացած է: Մեր ցաւակցութիւնները կը յայտնենք իրեն եւ բոլոր սուգի մէջ եղողներուն:
- Յուլիսի վերջին Կիրակին մկրտութեան պաշտամունք պիտի ունենանք: Վերստին ծննդեան փորձարոտութեամբ պատանիներ, հաստացեալներ աղօթքով որոշում կայացուցէք:
- Թամարա քորը Ալէքսանտրեան Տիրոջը փառքին համար յաջողութիւն ունեցած է: Մեր սիրելի քրոջ դեղագործութեան վկայականը կը շնորհատրենք: Տեղը օրհնէ զինք ու իր ընտանիքը:

## **ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍՔԵՐ**

- ◆ *Ան որ Աստուծոյ կը ծառայէ, բարի տէր մը ունի:*
- ◆ *Երբ Աստուած դուր մը կը գոցէ, անշուշտ պատուհան մը կը բանալ:*
- ◆ *Աստուած յանախ մեզ կ'այցելէ, բայց մենք ուրիշ զբաղումներ ունինք:*
- ◆ *Եթէ Աստուած քեզ սիրէր, այնքան որքան դուն կը սիրես զինք, արդեօք ո՞ր կ'ըլլայիր:*
- ◆ *Շատեր ամբողջ օրը կը մոռնան Աստուծոյ ու կ'աղօթեն որ զիրենք յիշէ զիշերուան մէջ:*

## ԳԱՂՏՆԻՔ

Ջրի մէջ ապրել  
Բայց ձուկ չլինել  
Ադի ջրի մէջ  
Անլի ձուկ լինել  
Այս բոլորի մէջ  
Մի իմաստ գտնել  
Կուգեմ մտածել  
Թե ինչպես փնտրեմ  
Կլանքիս իմաստը  
Որտեղ որոնեմ:  
Ինչ գնով էլ լինի  
Պետք է այն գտնեմ:  
Մտքերս հիմա  
Երկինքը ուղղիր  
Ամեն մի գաղտնիք  
Այնտեղ դու փնտրիր:

Շնորհիկ Ղազարյան  
Սուրբ Լէւո Սիրի - Եուֆա

## ԻՄ ՓՐԿԻՉԻՆ

Օ՛հ երանի այն մարդուն,  
Որ կգտնի իր փրկչին,  
Անկախ իրեն տարիքից,  
Եվ չի տանջվի նա կայնքում:  
Հիտո՛ւ, Հիտո՛ւ ինչ քաղցր անուն  
Որ հնչվում է ցնցազին  
Եվ տալիս է այն մարդուն  
Ուժ եւ ավյուն ապրելու տե՛նչ հավիտյան  
Հիտուն է, մեր կյանքի աղբույր  
Մեր տա՛ն, մեր հո՛ւյս  
Մեր լո՛յս ու սե՛ր, եւ մեր հավատ  
Մեր կյանքի կենաց հանգրվանը

Լուսինե Թոփճեան  
Սէն Ֆրանսիսկօ

### ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ

Եթէ Տէրը կ'ստաջնորդէ այս թերթիկին կամ այլ եկեղեցապատկան ծառայութիւններու նիւթական աշակցութիւն բերել, սրտանց կը գնահատենք:

---

## Armenian Evangelical Brethren Church

3200 London St., Los Angeles, CA 90026

(213) 483-7265 / Fax (213) 483-7002

Internet: [www.aebcm.org](http://www.aebcm.org) – E-mail: [aebcministries@aol.com](mailto:aebcministries@aol.com)